*344. Ս. ԳԵՎՈՐԳԻ հյուսիսային պատի սարքին մասում, արտաքուստ, նորոգումների ժամանակ ագուցված տապանաքարի վրա.*



Ծանոթ. *Գրչության տեխնիկան և ոճը* XVI—XVII *դարերի է, անշուշտ անձնանուն է, թերևս նաև ազգանվան հետ միասին. ինչպես էլ վերծանվի, միշտ ենթադրական կմնա։ Դնում ենք որպես փակագրության նմուշ միայն։*

*345. ԱՎԵՐԱԿ ԵԿԵՂԵՑՈՒ մոտ, նույնպես ավերակ մատուռի մեջ գտնվող չորս խաչքարերից երկուսի վրա կան արձանագրություններ.*

ԿԱ̅ՆԵՑԱ Մ̅ԽԱՂԵՐՍԲԱՐԷԽ ՍԱՋ
ԱՐԻՆ
ԱՆՆԻՆ
ԽՂԱՐ
ԻՆ

Ա. ԿԱՆ˻Կ˼ՆԵՑԱՒ ՍԲ. ԽԱՉԵՐՍ
ԲԱՐԷԽԱՒ|Մ ԱՋ|ԱՐԻՆ.|ԱՆՆԻՆ.
Խ˻Ա˼ՋԱ˻ՏՈՒ˼ՐԻՆ:

Ծանոթ. *Ժամանակը որոշվում է կանգնեցնողների անուններով.* Ազարիայի *մահվան թվականն է 1513. հետևաբար դրանից առաջ։*

*346. ԽԱՉՔԱՐ, նախորդի մոտ, քիվին 1 տող։*

ՄԲԽ̅ՉՍԲԱՐԷԽԱՍ ՍԱՐԳՍԻՆ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՍԱՐԳՍԻՆ:

Ծանոթ. *Ժամանակակից է նախորդին։*

*347. Ս. ԳԵՎՈՐԳԻ հյուսիսային պատի վրա, արտաքուստ եղել է նախկինում հետևյալ արձանագրությունը, որը մենք տեղում չգտանք.*

Կամաւն Աստուծոյ ես Ստեփաննոս քահանայ, որդի Կունցուզ աղին, շինեցի զըրջապատս եկեղեցւոյս, յիշատակ ինձ և մաւրն իմոյ Արղունին և եղբարց իմոց:

Ծանոթ. *Ստեփաննոս քահանան այլ արձանագրությունների մեջ հիշատակված է 1557 թ. (Նորադուզում)։*

*Հրատ. Ջալալեան. II, 124։ Ալիշան, 42։ Սմբատեանց, 501։ Լալայան, XVIII, 122։*

## ՍԱՐՈՒԽԱՆ (ՆԱԽԿԻՆՈՒՄ ԴԱԼԻՂԱՐՏԱՇ)

*Գյուղի հին անունը մոռացվել է։ 1513 թվականին Տաթևի փաստաթղթին ստորագրած Գեղարքունիքի մելիքների և տանուտերերի ցանկում կա* Լճիե որդի Պուսախին, թոռն Տել ուղարտաշին: *Ըստ երևույթին, Դելիղարդաշը այս գյուղի մելիքական տոհմի հիմնադիրն է և գյուղի անվանատուն։ Արձանագրությունների մեջ հիշատակված Մելիք Մալխասը և Մելիք Մանուչարը Դալիղարդաշի ժառանգներն են։ Այս վերջինս իր հերթին անվանատու է այն ընդարձակ սարադաշտին, որն ընկած է Կամոյի և Մարտունու շրջանների գյուղերի արանքում և կոչվում է «Մանուչարի դաշտ»։ Ջամբռի մեջ ևս գյուղի անունը Դալիղարտաշ է հիշված։*

*Գյուղում պահպանված հուշարձաններն ու արձանագրությունները* XVI *դարից ավելի հին չեն. դրանք միայն խաչքարեր ու տապանաքարեր են՝ դրված հասարակ, քարաշեն և կիսավեր Թուխ Մանուկ, ս. Գևորգ մատուռների պատերի մեջ, շուրջը կամ գերեզմանատանը։*

*Մեր ժողովածուում ամփոփված են 17 արձանագրություն, որոնցից միայն չորսն են նախկինում հրատարակվել։*

**348. ԽԱՉՔԱՐ**, *մեծ և գեղաքանդակ. ագուցված է եղել ս. Խաչ եկեղեցու բեմի մեջ. այժմ գտնվում է Մալխասյան Հայկազի բակում, կոտրված է երկու մասի և ջարդոտված. կարմրավուն քարից է, լայն ճակատով՝ կենտրոնում խաչ. քիվին և խաչի շուրջն ու ստորին մասում 4 տող.*



ԽԱՉՍ ԷՏԱՐԻՆ. ՇԻՆԵՑ ՈՐ . . . |
ՍՈՒՐԲ ԽԱՉ˪Ս˩ ԲԱՐԷԽԱ˪Ւ˩Ս
ԴՈՒԼԻ ԱԴԻՆ. ԹՎ. :ՋՂԷ: (1548):

ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ ՄԱՏՈՒՌ

**349. ԽԱՉՔԱՐ**, *մեծ և գեղաքանդակ. ագուցված է Թուխ Մանուկ մատուռի հյուսիսային պատի մեջ ներքուստ. ճակատին և շրջանակներին 4 տող.*



ԿԱՄԻՒՆ ՅԱՑ. ՄԷԼ˪Ի˩Ք ՊԱՐԷՔՍ, ՊԱՐՈՆ| ՄԵՐՀԱՊՍ ԿԱ˪Ն˩ԿՆԱՑՈՑԻ
ՍԲ ԽԱՉՍ ՏՐ. ԲԱՐՍԵՂ˪ԻՆ˩.| ԹՎ. :ՋՂԸ: (1549).| ՄԵԼ˪Ի˩ՔՍԷԹ ԿԱՋՄՈՂ:

**350. ԽԱՉՔԱՐ**, *մեծ և գեղաքանդակ, ագուցված է մատուռի հարավային պատի մեջ ներքուստ. քիվին և թևերի շուրջը 2 տող.*



ՍԲ. ԽԱՉ˪Ս˩ ԲԱՐԷԽԱ˪Ւ˩Ս ՏԻՐՈՒՏ
ՊԷԿԻՆ.| ԹՎ. :ՌԻԶ: (1577):

**351. ԽԱՉՔԱՐ**, *կարմրավուն քարից. կիսովին ծածկված է թափված բեկորներով, գտնվում է Թուխ Մանուկի արևմտյան պատի տակ, ճակատին երկու տողի մնացորդներ.*

. . ՏԻՆ . . . . . . . . . . . ՏԻՆ . . . |
. . . ՐԲԽԱՆԲՄԽԱՒՍԱՂԲԵ ⌜ՍՈՒ⌝ՐԲ ԽԱՉ˪Ս˩ ԲԱՐ˪Է˩ԽԱՒՍ ԱԴԲԵ⌜ՐԿԱՆ⌝:

Ծանոթ. *Ժամանակակից է նախորդներին՝* XVI *դար.*
*Սրա կողքին կանգնած է մեկ ուրիշը ես, բայց անարձանագիր.*

352. *ԽԱՉՔԱՐ, փոքր, գեղաքանդակ, ագուցված է ս. Գևորգի արևելյան պատի մեջ, արտաքուստ, քիվին և թևերի շուրջը 4 տող.*

ՍԲԽԱՉԲԱՐԷԽԱՂՋՀԶԱՐՊԷԿ...

Թ | Վ
ՋՂ |
Ը |

ՍԲ. ԽԱՉ[Ս] ԲԱՐԷԽԱ[ԻՍ] ՂԱԶԱՐ[ԻՆ], ՀԶԱՐՊԷԿ[ԻՆ]. ԹՎ. :ՋՂԸ: (1549):

ԳՆՐՍՋՄԱՆԱՏՈՒՆ

353. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, գտնվում է հյուսիսային եզրին, երեսին 3 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏՄԱՀՏԱՅԼԱՐԻՆ
ԹՎ
ՌՃԷ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՄԱՀՏ[ԵՍԻ] ՏԱՅԼԱՐԻՆ. ԹՎ. :ՌՃԷ: (1658):

Ծանոթ. *Անձնանունը կասկածելի:*

354. *ԽԱՉՔԱՐ, գերեզմանատան հյուսիսային եզրին, քիվին, ճակատին և խորանի շուրջը 3 տող.*

ՍԲ·············ԽԱ
ՆՍՄԷԼԻՔՄԱԼԽԱՍ
ԻՆ ⌒ ԹՎՌՃԼԲ

ՍԲ [ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱ]ԻՍ ՄԷԼԻՔ ՄԱԼԽԱՍԻՆ. ԹՎ. :ՌՃԼԲ: (1683):

Ծանոթ. *Հրատարակիչների մոտ թվականը նշանակված է ՌՃԽԸ (1699), բայց դիմացի տապանաքարի վրա է այդ թվականը (տե՛ս հաջորդը): Երկու թվականների տարբերությունը պետք է բացատրել նրանով, որ խաչքարը կանգնեցված է կենդանության ժամանակ:*

*Հրատ. Սմբատյանց, 503; Լալայան, XVIII 136:*

355. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, եռաստիճան, ղանվում է նախորդ խաչքարի դիմաց, արևմտյան ճակատին 2 տող.*

ԱՅՍԷ Տ··Պ Ա·······ԼԻ
ՔՄԱԼԽԱՍԻ + Թ·Վ·Ռ·Ճ·ԽԸ
ԷՐ

ԱՅՍ Է Տ[ԱՊԱ]Ն ՄԷ[ԼԻ]Ք ՄԱԼԽԱՍԻ. ԹՎ. :ՌՃԽԸ: (1699) ԷՐ:

356. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, տաշտակ, երեսին 4 տող.*

ԱՅՍԷՀԱ
ՆԳԻՍՏՋ
ԱՎԱՆԻՆ
ՌՃԾԳ

ԱՅՍ Է ՀԱ[Ն]ԳԻՍՏ Ջ[Ա]ՎԱՆԻՆ: ԹՎ. :ՌՃԾԳ: (1704):

*Հրատ. Սմբատյանց, 503:*

357. *ԽԱՉՔԱՐ, կանգնած է Մելիք Մալխասի խաչքարին կից, քիվը բոլորովին ջարդված, երևում են գրերի հետքեր միայն, թևերի արանքում 3 տող.*

Թ | ՎՌ
Ճ | ԿԱ
Է | Ր

ԹՎ. :ՌՃԿԱ: ԷՐ. (1712):

Ծանոթ. *Սմբատյանցը խաչքարի քիվին կարդացել է՝* սբ. խաչս բարեխաւս է Սարգիս-ջանին: *Մենք ունենք տապանագիրը, որ հաստատում է այս:*

*Հրատ. Սմբատյանց, 503:*

358. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, մեծ, նախորդ խաչքարի առաջ և նրա աերոջը. երեսին 1 տող.

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏՍԱՐՔԻՍՃԱՆԻՆ — ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՍԱՐՔԻՍՃԱՆԻՆ։

359. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, մեծ, երեսին 2 տող.

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏՄԷԼԻՔ<br>ՄԱՆՈՒՉԱՐԻՆ — ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՄԷԼԻՔ| ՄԱՆՈՒՉԱՐԻՆ։

Ծանոթ. Տապանաքարի գլխին կանգնած է մի մեծ պատվանդան, որի վրա խաչքարերի երկու փոսեր են. նախկին հրատարակիչները խաչքարի վրայից արտագրել են միայն հետևյալը.

360. Ս̅Բ. խաչս բարեխաւս է Մէլիք Մանուչարին. Թ̅Վ. ։ՌՃԿԲ։ (1713)։

Հրատ. Սմբատյանց, 503։ Լալայան, XVIII 136։

361. ՏԱՊԱՆԱՔԱՐ, գտնվում է նախորդին կից. երեսին 2 տող.

ԱՅՍԷ ՀԱՆ ԳԻՍՏ<br>ՆԷՐՍԷՍԻՆ — ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ| ՆԷՐՍԷՍԻՆ։

Ծանոթ. Մելիք Մանուչարի հարազատներից է և ժամանակով մոտ նախորդին՝ XVII դարի սկիզբ։

362. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, երեսին և հարավային կողին 2 տող.

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏՄԱՐԵՆԻՆ<br>ԹՎՌՃՀԱ — ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՄԱՐԵՆԻՆ.| Թ̅Վ. ։ՌՃՀԱ։ (1712)։

Ծանոթ. Թվականի տասնավորն ու միավորը կասկածելի։

363. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, երեսին 2 տող.

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏՍԱԼՎԱՐ<br>ԴԻՆ — ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՍԱԼՎԱՐ|ԴԻՆ։

Ծանոթ. Գլխին մնում է խաչքարի դատարկ պատվանդան։

364. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, կիսովին խրված գետնի մեջ և գլխին խաչքարի դատարկ պատվանդան. երեսին թերի 2 տող.

ԱՅՍԷՀԱՆԳԻՍ<br>ՏՊԱՂԱ····· — ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ|Տ ՊԱՂԱՒ[ՍԻՆ] . . .։

## ՀԱՑԱՌԱՏ (ՆԱԽԿԻՆՈՒՄ ՓԱՇԱՔԵՆԴ, ՀՆՈՒՄ՝ ՍՈՒՆԵՂԻ)

Գյուղի արձանագրություններ ունեցող հուշարձանները, ըստ տեղադրության, բաժանվում են երեք խմբի.

Ա. Գյուղամիջի եկեղեցիների խումբ, բաղկացած է երկու իրար կից եկեղեցիներից. հնագույնը՝ ս. Աստվածածին, ներքուստ և արտաքուստ խաչաձև և գմբեթավոր փոքր եկեղեցի է. շինարարությունը հիշատակող արձանագրությունը (№365)՝ թեև կրկին անգամ արտագրված, պահպանել է հիմնարկման թվականը՝ 899., որը պիտի ստույգ համարել։ Հետագա նորոգումները չեն խախտել նախնական ձևերը։